

Երկրաբանություն

УДК 624.131

Ա. Հ. ՀԱՅՐՈՅԱՆ, Ա. Կ. ԱԹԱՐՓՈԽ, Բ. Ա. ՄՈԽՏԱՐԻ

**ՑԵՍԵՆՏԱԳՐՈՒՏՆԵՐԻ ԿԱՍԽՔԻ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԽՏՈՒԹՅԱՆ
ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆԸ ՆՐԱՆՑ ԱՄՐԱՑՄԱՆ ԳՈՐԾԵՆԹԱՅԻ
ԻՆՏԵՆՏԻՎՈՒԹՅԱՆ ՎՐԱ**

Ներածություն: Ժամանակի ընթացքում ցեմենտագրունտների ամրացման գործընթացի փուլերի ուսումնասիրությունը ժամանակակից ճարտարագիտական երկրաբանության (գրունտագիտության) հիմնախնդիրներից մեկն է:

Ցեմենտագրունտները ցեմենտի և բնական միներալների միմյանց հետ փոխազդող բարդ ֆիզիկաքիմիական համակարգեր են:

Համաձայն ժամանակակից միկրոսկոպիկ ուսումնասիրությունների՝ ցեմենտագրունտների ամբողջ կառուցվածքագոյացման գործընթացը բաժանվում է 3 փուլերի. ա) կոագուլացիոն կապերով բույլ կապակցված ագրեգատների գոյացման, բ) տարածական բյուրեղային կառուցվածքի գերակշռությանք (ամրացման փուլ), գ) մասնակի վերաբյուրեղացման կամ ծերացման [1]:

Կառուցվածքային բնութագրիչների և ժամանակի ընթացքում ցեմենտագրունտների ամրության փոփոխությունը հիմնականում պայմանավորված է կալցիումի հիդրօսիլիկատների տրանսֆորմացիայով, որը ցեմենտի քիմիայի կնճռոտ հարցերից է:

Համաձայն ակադեմիկոս Ե.Մ. Սերգեևի միկրոսկոպիկ ուսումնասիրության արդյունքների՝ կավային գետնահողերը ունեն կմախքանման կառուցվածք [2]: Կմախքը կազմված է ավազային և խոշոր փոշային մասնիկներից, որոնց միջատիկային տեղամաները լցված են կավային և կորիդ մասնիկներով: Ցեմենտի լրացուցիչ ավելացումը հանգեցնում է մանրահատիկ զանգվածի աճմանը, որի հետևանքով տեղի են ունենում բարդ ֆիզիկաքիմիական գործընթացներ: Ակսած առաջին օրվանից գրունտային մասնիկների միջև, ծակոտիներում և կոնտակտներում գոյանում են կալցիումի հիդրոսիլիկատի 3–6 մկմ երկարության և 0,2–0,3 մկմ տրամագծով ասեղնածև գոյացություններ [3]: Առաջին շաբարված ընթացքում դրանց քանակությունը աճում

է, այնուհետև՝ պակասում, որի հետևանքով դիտվում է աճրացման ինտենսիվության նվազում: Արդեն մի քանի ամիս անց այդ գոյացությունները հանդիպում են միայն համեմատաբար խոշոր ծակոտիներում, իսկ տարիներ անց դադարում են գրյություն ունենալ՝ վերափոխվելով ժելաննան և ցանցաննան վիճակի [4]:

Տևական աճրացումից հետո ավագային և խոշոր փոշային մասնիկների մակերևույթին դիտվում են պուցցողանային ռեակցիաներ: Հատկապես այդ գործընթացներն առավել ակտիվ են ընթանում, երբ իրար հետ փոխազդեցության մեջ են մտնում ցեմենտի միներալները և կավային մասնիկները:

Հարկ է նշել, որ չնայած ցեմենտագրունտի աճրացման գործընթացի ինտենսիվության վրա կմախրի սկզբնական խոտության և նրանում ցեմենտի պարունակության ազդեցության կարևորությանը, այդպիսի ուսումնասիրություններին վերաբերող աշխատանքները սակավարիվ են:

Տվյալ աշխատանքի նպատակն է ուսումնասիրել ցեմենտագրունտների աճրացման գործընթացը ժամանակի ընթացքում հաշվի առնելով կմախրի նախնական խոտությունն ու ցեմենտի պարունակությունը:

Փորձաքարական մաս: Որպես ուսումնասիրության օրյեկտ ծառայել են Իրանի Իսլամական Հանրապետության Էյրաքարայի տարածաշրջանի Արար քաղաքի տարածքից վերցված կավային գետնահողերը, որոնք մեր փորձերում հանդիսանում են ցեմենտագրունտների հիմնական կավային քաղադիչ:

Մինչև ցեմենտագրունտների խառնուրդների ստացումը Իրանի Իսլամական Հանրապետության Արար քաղաքի քաղաքացիների կողմանը կավային գետնահողի գետեխնիկական հատկությունների կոմպլեքս ուսումնասիրություններ: Զրաֆիզիկական հատկություններից որոշվել են հատիկաչափական կազմը, միներալային մասնիկների խոտությունը, պլաստիկության սահմանները, օպտիմալ խոնավությունը, կմախրի առավելագույն խոտությունը:

Գետեխնիկական հատկությունների միջինացված ցուցանիշները բերված են աղյ. 1-ում (հատիկաչափական կազմ) և աղյ. 2-ում (զրաֆիզիկական հատկություններ):

Աղյուսակ 1

Մասնիկների տրամագիծը, մմ	20–10	10–5	5–2	2–1	1–0,5	0,5– 0,25	0,25– 0,1	0,1– 0,05	0,05– 0,005	<0,005
Պարունակությունը, %	7,6	2,6	2,9	1,5	1,0	1,9	0,8	19,3	38,9	23,5

Կավային գետնահողի, ինչպես նաև ցեմենտագրունտների օպտիմալ խոնավությունը և կմախրի առավելագույն խոտությունը որոշվել են ստանդարտ խոտացման եղանակով՝ Պրոկտորի խոտացման փորձասարքի միջոցով:

Համաձայն գետեխնիկական հատկությունների ցուցանիշների՝ գետնահողերը ներկայացված են ավազակավերով:

Աղյուսակ 2

Վեհական պելքանի սիհօսլ չափագործման դաշտը, հազ.	Վարչական պելքանի սիհօսլ չափագործման դաշտը, հազ.						
8,0	2,68	31,3	22,2	9,1	20,5	1,68	0,510

Ցեմենտագրունտների ստացման համար օգտագործվել է M400 պորտալանդցեմենտ: Նմուշներում ցեմենտի պարունակությունը կազմել է 3, 5, 7, 9%: Յուրաքանչյուր նմուշի համար որոշվել են օպտիմալ խոնավությունը և կմախքի առավելագույն խոսությունը (աղյ. 3):

Աղյուսակ 3

Ցեմենտի պարունակությունը, %	Օպտիմալ խոնավությունը, %	Կմախքի առավելագույն խոնավությունը, գ/սմ ³
3,0	20,0	1,63
5,0	18,4	1,65
7,0	19,3	1,65
9,0	20,6	1,61

Ցեմենտագրունտների սեղման ժամանակավոր դիմադրությունը որոշելու համար պատրաստվել են նրանց 7, 21, 28 և 60 օրական, 5 սմ տրամագծով և 12 սմ բարձրությամբ գլանածն նմուշներ և սեղմվել հիդրավիկ մաճլիչով: Բեռնավորման արագությունը բոլոր փորձերում կազմել է 3 մմ/րոպե:


Նկարում բերված են ցեմենտի տարրեր պարունակությամբ և կմախքի տարրեր խոսությամբ ցեմենտագրունտների միառանցք սեղման ժամանակավոր դիմադրության (եռակի փորձարկմամբ որոշված) կորերը կախված հասակից:

Համաձայն փորձարարական ուսումնասիրության արյունքների՝ 28 օրվա համար որոշված սեղման ժամանակավոր դիմադրությունն իր առավելագույն արժեքին (5,1 ՄՊա), հասնում է ցեմենտագրունտի մեջ ցեմենտի 7% պարունակության դեպքում, երբ նրա սկզբանական խտացումը հասցված է առավելագույնի (տես նկարը):


Ինչպես երևում է նկարից, ստացված կախվածությունները ունեն կորագիծ բնույթ, ի տարրերություն նախկինում այլ հեղինակների կողմից ստացված զծային կախումների՝ պայմանավորված ամրացման տարրեր փուլերում ընթացող ֆիզիկական, ֆիզիկաքիմիական և քիմիական բարդ գործնարացներով [5]: Կարելի է սպասել, որ մի քանի տարի հետո այդ փորձանմուշների

համար ստացված կորերը իրենց բնույթով կմտտենան Պ. Ուրինդերի տեսական կորին [6]:


ա) ցեմենտի պարունակությունը 3%




բ) ցեմենտի պարունակությունը 5%



գ) ցեմենտի պարունակությունը 7%



դ) ցեմենտի պարունակությունը 9%



Ցեմենտագրունտների ամրացման գործընթացի ինտենսիվության կորերը: Ցեմենտագրունտների սկզբնական ինտենսիվության (ρ_d , $\varphi/\text{սմ}^3$) արժեքներն են: ա) 1 – 1,63; 2 – 1,6; 3 – 1,55; 4 – 1,5; բ, գ) 1 – 1,65; 2 – 1,6; 3 – 1,55; 4 – 1,5; դ) 1 – 1,61; 2 – 1,55; 3 – 1,5:

Ամրացման սկզբնական փուլում՝ մինչև առաջին յոթ օրը, ցեմենտագրունտի կմախրի սկզբնական խտության ազդեցությունը միառանցք սեղման ժամանակավոր դիմադրության վրա աննշան է: Այդ փաստը ակնհայտութեան երևում է ցեմենտագրունտների կմախրի ամենացածր (ρ_d) և ամենաբարձր (ρ_{dmax}) խտությունների համար որոշված սեղմնան ժամանակավոր դիմադրության արժեքների հարաբերությունից: Մասնավորապես, 3% ցեմենտի պարունակության դեպքում նշված հարաբերությունը կազմում է 0,888, 5%-ի դեպքում՝ 0,884, 7%-ի դեպքում՝ 0,824, և 9%-ի դեպքում՝ 0,881:

7-րդ օրից մինչև 28-րդ օրը ցեմենտագրունտների կմախրի սկզբնական խտության ազդեցությունը միառանցք սեղման ժամանակավոր դիմադրության վրա աստիճանաբար աճում է: Ցեմենտի 3% պարունակության դեպքում 28 օրական հասակ ունեցող նմուշների համար ρ_d/ρ_{dmax} հարաբերությունը հասնում է՝ 0,714, 5%-ի դեպքում՝ 0,740, 7%-ի դեպքում՝ 0,656, 9%-ի դեպքում՝ 0,702: Դիտարկվող բոլոր ցեմենտագրունտների համար 28-րդ օրից մինչև 60-րդ օրը ընկած ժամանակահատվածում նկատվում է անրացման գործընթացի ինտենսիվության նվազում: Այդ հարաբերությունը 60 օրվա համար 3% ցեմենտի պարունակության դեպքում կազմում է՝ 0,702; 5%-ի դեպքում՝ 0,636; 7%-ի դեպքում՝ 0,659 և 9%-ի դեպքում՝ 0,680:

Փորձարարական հետազոտությունների արդյունքում կարելի է եղրակացնել, որ ցեմենտագրունտների կմախրի սկզբնական խտությունը էապես ազդում է ժամանակի ընթացքում ամրացման գործընթացի ինտենսիվության վեագում: Այդ հարաբերությունը 60 օրվա համար 3% ցեմենտի պարունակության դեպքում կազմում է՝ 0,702; 5%-ի դեպքում՝ 0,636; 7%-ի դեպքում՝ 0,659 և 9%-ի դեպքում՝ 0,680:

վրա, հետևաբար, նաև ամրության վերջնական մեծության վրա: Ամրացման գործընթացները առավել ինտենսիվ են զարգանում, երբ ցեմենտի պարունակությունը կազմում է 7% (օպտիմալ խառնուրդ) և կմախքի սկզբնական խտությունը հասցված է առավելագույնի (տես աղյ. 1-ը և նկարը):

Նշանակած հանգամանքը պետք է հաշվի առնել շինարարական և նախագծային աշխատանքներում: Բացի այդ, անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն կարևոր հանգամանքը, որ 28 օրական ցեմենտագրունտների ամրության ցուցանիշը վերջնական չէ, այն հետագայում դանդաղորեն շարունակում է աճել:

*ԵՊՀ ջրաերկրաբանության և ճարտարագիտական
երկրաբանության ամբիոն,
Արար (Իրան) քաղաքի Ազադ համալսարան
(Azad university Arak, Iran)*

Ստուգվել է 19.02.2009

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Гончарова Л.В. Влияние минералогического состава дисперсных грунтов на их цементацию. Вопросы инженерной геологии и грунтоведения. Сб. статей кафедры грунто-ведения и инженерной геологии. М.: Изд-во МГУ, 1968, с. 338-344.
2. Sergeev Y.M., Grabowska-Olzewska B., Osipov V.I., Sokolov V.N., Kolomenski Y.N. J. Microscopy, 1980, v. 120, pt3, p. 237-260.
3. Тейлор Х.Ф. Химия цементов. М.: Изд-во литературы по строительству, 1969, 501 с.
4. Diamond S. In: Hydraulic Cement Pastes: their structure and properties. Proc. Conf. Cement and Concrete Assoc. England, 1976, p. 2.
5. Winterkorn H.F. Soil stabilization, 2000, v. 9, p. 312-336.
6. Ребиндер П.А. Физико-химические основы современных методов закрепления грунтов. Пленарные доклады и речи. М.: Изд-во МГУ, 1970, с. 13.

С. Г. АЙРОЯН, А. К. АТАРПУР, Б. А. МОХТАРИ

ВЛИЯНИЕ НАЧАЛЬНОЙ ПЛОТНОСТИ СКЕЛЕТА ЦЕМЕНТОГРУНТОВ НА ИНТЕНСИВНОСТЬ ПРОЦЕССА ИХ УПРОЧНЕНИЯ

Резюме

В работе приводятся результаты экспериментальных исследований сопротивления сжатия образцов цементогрунтовых смесей с различной начальной плотностью скелета и разным содержанием цемента при сроках хранения от 7 до 60 дней.

Установлено, что при хранении цементогрунтовых смесей до 7 суток влияние начальной плотности скелета цементогрунта на сопротивление сжатия несущественно. При хранении от 7 суток до 28 дней наблюдается возрастание интенсивности сопротивления сжатия во времени. В интервале от 28 до 60 дней наблюдается снижение этой интенсивности.

Наибольшая интенсивность возрастания прочности на сжатие во времени наблюдается при содержании цемента 7% и максимальном уплотнении цементогрунтов.

Стандартная прочность на сжатие (28 суток) цементогрунта составляет лишь часть общей прочности, в дальнейшем она продолжает медленно расти.

S. H. HAYROYAN, A. K. ATARPOUR, B. A. MOKHTARI

INFLUENCE OF INITIAL DENSITY OF CEMENT SOILS SKELETON ON INTENSITY OF HARDENING PROCESS

Summary

In the work the results of compression resistance tests of cement soil samples of various initial densities of a skeleton and the cement composition for the time period from 7 to 60 days are discussed.

It was established that the influence of initial density of a cement soil skeleton on resistance of compression is insignificant for the initial 7 days.

Increase of intensity to resistance of compression in time is observed for the time interval from 7 to 28 days. In the range from 28 to 60 days decrease in intensity of increase of soil samples compression strength was observed.

The greatest intensity of strength increase in time on compression test at the optimum structure of cement soil (the cement of 7%) and the maximum compacted conditions were registered.

Standard strength on compression (28 days) of cement soil makes only a part of the general strength.